«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի

Մ. Խոստեղյանի անվան № 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Անձի էկոլոգիական կուլտուրան»

Խմբակի

Տարեկան թեմատիկ պլան

3-րդ դասարան

/Շաբաթական 1 ժամ, ընդամենը՝ 34 ժամ/

Խմբակի ղեկավար՝ Ա. Տեր-Գասպարյան

2023-2024 ուստարի

Անձի էկոլոգիական կուլտուրան
ՏԱՐՐԱԿԱՆ
Շաբաթական մեկ ժամ, ընդամենը՝ 34 ժամ

Բացատրագիր

Անձի էկոլոգիական կուլտուրան համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: Անձի էկոլոգիական կուլտուրայի պարապմունքները նպաստում են սովորողների կողմից տարերային աղետների մասին գիտելիքների իմացությանը, որն էլ կնպաստի ստացած գիտելիքները օգտագործել անհրաժեշտության դեպքում աղետներից պաշտպանվելու համար: Կիմանա ճանապարհային երթևեկության կանոնները, կկարողանա օգտվել հասարակական տրանսպորտից դրսևորելով բարեկիրթ վարվելաձև: ԿԿարողանա պահպանել բնությունը աղտոտվածությունից: ԿԿարողանա արժևորել բնության դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Որն էլ կնպաստի մարդու և բնության ներդաշնակության զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը:

Նպատակները

- Ներկայացնել տարերային աղետներից պաշտպանվելու, շրջապատում կողմորոշվելու և բնության պահպանելության կանոնները:
- Ձևավորել և զարգացնել կայուն գիտելիքներ տարերային աղետներից պաշտպանվելու, երթևեկության կանոնները իմանալու և բնական պաշարների ռացիոնալ օգտագործման մասին:
- Նպաստել առանց խուճապի անվտանգության կանոնների պահպանմանը, կենցաղում օգտագործվող դեղորայքի և կենցաղային քիմիայի վտանգավորության մասին գիտելիքների ամրապնդմանը, սեր և հոգատար վերաբերմունք դեպի շրջապատող միջավայրը:

- Արժևորել բնության դերն ու նշանակությունը մարդու կյանքում, փոխադարձ հարգանքն ու վերաբերմունքը հասարակության նկատմամբ և մաքուր միջավայր ունենալու կարևորությունը:

Խնդիրները

- Ստեղծել անվտանգ, զարգացած, մաքուր միջավայր:
- Աշխատանքներ տանել աշակերտների գիտելիքների ամրապնդման և դրանք գործնականում կիրառելու ուղությամբ:
- Ուշադիր լինել օդերևութաբանական տեղեկատվությանը, ճանապարհատրանսպորտային նշանների ցուցումներին, բնապահպանական անվտանգության կանոններին:
- Հաճախակի կազմակերպել ուսուցողական խաղեր տարերային աղետներից պաշտպանվելու ուղղությամբ, էքսկուրսիաներ, նախագծային աշխատանքներ:

Խմբակի անդամները կկարողանան՝

ա/ կողմնորոշվել բնական աղատների ժամանակ,

բ/ հնարավորինս անվտանգ տեղաշարժվել փողոցում,

գ/ նպաստել բնության պահպանությանը և զարգացմանը

դ/ արժևորել բնության դերը մարդու կյանքում,

տարեկան

Հ.	Բովանդակություն	Նպատակ	Ժամաքանակ	Նշումներ
1	Երկրաշարժ	Ծանոթացնել երկրաշարժից պաշտպանվելու կանոններին:	1	
2	Հրաբխի ժայթքում	Ծանոթացնել հրաբխի ժայթքումից պաշտպանվելու կանոններին:	1	
3	Ջրհեղեղ	Իմանալ ինչ է ջրհեղեղը և դրա հետևանքը	1	
4	Փլուզում, սողանք, ձնահյուս	Հաղորդել տեղեկություն թե ինչպես առանց խուճապի մատնվելու պաշտպանվել վտանգներից	2	
5	Փոթորիկ	Իմանալ փոթորիկի տեսակները և դրանց վտանգավորության աստիճանը	1	
6	Երաշտ	Իմանալ ինչ է երաշտը և դրա հետևանքը	1	
7	Հրդեհ	Գիտելիք ձեռք բերել հրդեհավտանգ իրավիճակներից զերծ	1	

		մնալու մասին		
8	Համաճարակ	Տեղեկություն ձեռք բերել համաճարակի մասին	1	
9	Տրերային այլ աղետներ	Տեղեկանալ տարերային աղետների առաջացման պայմանների մասին	1	
10	Առաջին անհրաժեշտության իրերը աղետի դեպքում	Իմանալ, որ իրերը տեղ պետք է գտնեն առաջին անհրաժեշտության պայուսակի մեջ	1	
11	Երթևեկություն	Իմանա ճանապարհային երթևեկության կանոնները	1	
12	Մարդատար ավտոմեքենա նստելիս անվտանգության կանոնները	Իմանալ, որ մինչև 12 տարեկան երեխաներին արգելվում է մեքենայի դիմացի նստատեղին նստել և ամրագոտի կապելու անհրաժեշտությունը	1	
13	Հասարակական տրանսպորտ	Կարողանա օգտվել հասարակական տրանսպորտից՝ դրսևորելով բարեկիրթ վարվելաձև	1	
14	Իմ տունն իմ ամրոցն է	Իմանալ հայրենի գյուղի ավանդությունը	1	

15	Էքսկուրսիա Գավառի համայնքի երկրագիտական թանգարան	Ծանոթանալ մշակութային արժեքներին	1	
16	Վտանգավորէ սուր, կտրող, ծակող առարկաներ	Պահպանել անվտանգության կանոնները	1	
17	Կենցաղում օգտագործվող դեղորայքի և կենցաղային քիմիայի վտանգավորությունը	Ձեռք բերել գիտելիքներ դեղորայքի, կենցաղային քիմիայի օգտագործման և անվտանգության կանոների մասին	1	
18	Տանը դեղորայքային տուփի անհրաժեշտությունը և պահպանումը	Կարևորել տանը դեղորայքային տուփի առկայությունը, և դրանց պահպանման կանոնները	1	
19	Գազի արտահոսք	Պահպանել անվտանգության կանոնները, անհրաժեշտության դեպքում կապ հաստատել համապատասխան ծառայության հետ	1	
20	ՀՀ էկոլոգիական իրավիճակը	Իմանալ ՀՀ-ում առկա էկոլոգիական աղտոտվածության աստիճանը	1	
21	ՀՀ հատուկ պահպանվող տարածքներ	Իմանա ազգային պարկերի և պետական արգելանոցների մասին	1	

22	ՀՀ անտառներ	Ձեռք բերել գիտելիքներ վայրի բնության պահպանման և բազմացման մասին	1	
23	ՀՀ ոռոգման գոտիներ	Ձեռք բերել որոշակի գիտելիքներ կուլտուր-ոռոգելի գոտիների մասին	1	
24	Ջրոլորտ	Իմանալ ինչ է ջրոլորտը	1	
25	ՀՀ ջրային պաշարներ	Իմանալ ՀՀ-ի ջրային պաշարների տեղաբաշխումը ըստ մարզերի	1	
26	Սևանա լճի աղտոտվածությունը	Գիտակցել աղտոտված ջրերի ազդեցության հետևանքները բնության և կենդանական աշխարհի վրա	1	
27	Տեսադաս «Սևան ազգային պարկ»-ի մասին	Ձեռք բերել և ամրապնդել ունեցած գիտելիքները	1	
28	Սևանա լճի դերն ու նշանակությունը	Կարևորել լճի նշանակությունը տարածաշրջանի համար, խնայողաբար օգտագործել քաղցրահամ ջրի պաշարները	2	
29	Մարդու էկոլոգիական կուլտուրա	Ունենալ գիտելիք բնապահպանության մասին	1	

30	Աղբի տեսակավորում	Իմանա տեսակավորման պատճառները	2	
31	Նախագծային աշխատանք	Աղբի տեսակավորում, վերամշակում	1	

Օգտագործված գրականության ցանկ

1. Ն. Գրիգորյան, Կենսապահովման հիմունքներ, «Արտակարք ալիք» գրադարան
2. Ռ. Մարուխյան, Ա. Հովսեփյան, Անձի էկոլոգիական կուլտուրան, «Արևիկ» հրատարակչություն, 2007թ.
3. Թափոնների կառավարում, նվազեցրու, վերօգտագործի՛ր, վերամշակի՛ր, ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, 2-րդ հրատարակչություն, 2018թ.
4. Կենսաբազմազանությունը գյուղական և քաղաքային միջավայրում, ուսուցիչների վերապատրաստման դասընթացի ձեռնարկ, 2-րդ հրատարակչություն, 2019թ.
5. Կլիմայի փոփոխություն, ինչպես իրականացնել ուսումնական նախագծային աշխատանքներ, ձեռնարկ ուսուցիչների համար: